

Հավելված 20.03.2014
N 2 որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Պաշտոնը՝ հանդապահ

Գործատուն՝ Եղեգիսի համայնքապետարան

Հաշվետու է՝ Եղեգիսի համայնքի աշխատակազմի ղեկավարին

Հաշվետու է Եղեգիսի համայնքի ղեկավարին

Աշխատանքային պարտականությունների նկարագիրը

Հանդապահը պարտավոր է.

- Ազնվորեն և բարեխղճորեն պահպանել սույն կանոնակարգը
- Ժամանակին, պատշաճ որակով իրականացնել աշխատանքային պարտականությունները և ստացած կարգադրությունները
- Պահպանել աշխատանքի անվտանգության տեխնիկայի կանոնները
- Խնայողաբար և ըստ նշանակության օգտագործել աշխատանքի կազմակերպման համար իրեն վստահված նյութական ռեսուրսները
- Իրեն վստահված գույքի և ռեսուրսների պաշտպանությանը սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես տեղեկացնել ղեկավարությանը և իր լիազորությունների և հնարավորությունների սահմանում կանխել դրանց հետագա տարածումը:
- Աշխատանքային պարտականությունների արդյունավետությունը ապահովելու նպատակով, մշտապես բարելավել մասնագիտական հմտությունները:

Աշխատանքային պարտականություններն ընդգրկում են հետևյալը.

1. Մասնակցել համայնքի Արտոների արածեցման կարգի մշակման գործընթացին
2. Մասնակցել ֆերմերների շրջանում Արտոների արածեցման կարգի հետ կապված տեղեկատվության և տեղեկատվական նյութերի տարածմանը
3. Համաձայն Արտոների արածեցման կարգի ուղղորդել հովիվներին, նախիրների և հոտերի հերթ պահողներին արտոների արածացման գործընթացի հետևողական կազմակերպման և պահպանման հարցում
4. Իրականացնել ամենօրյա հսկողություն Արածեցման կարգի պատշաճ կիրառման ուղղությամբ համայնքում
5. Հետևել և պաշտպանել մշակովի դաշտերը /բազմամյա խոտաբույսերի, հացազգի մշակաբույսերի, այգիների, բանջար-բոստանային կուլտուրանների/ չնախատեսված արածեցումներից
6. Արածեցման ընթացքում նկատած խախտումների վերաբերյալ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ խախտումը կանխելու նպատակով և տեղեկացնել համայնքապետարանին
7. Համայնքի Արտոների արածեցման ընթացքի վերաբերյալ ա տրամադրել մենօրյա տեղեկատվություն համայնքապետին
8. Ներկայացնել ամսական հաշվետվություն կատարված աշխատանքի վերաբերյալ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՅ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 9

20.03.2017 թ.

Գ. Եղեգիս
Հեռ. 24186

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ – ՎԱՃԱՌՔ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հայտարարել համայնքային սեփականություն հանդիսացող ներքո նշված հողերի աճուրդ-վաճառք գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:

Ծածկագիր 10-021-0104 0,45հա արոտ

Ծածկագիր 10-021-0109-0015- 0,02 հա արոտ

Ծածկագիր 10-021-114-041-0,40հա այլ հող

2. Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով կազմակերպել աճուրդ-վաճառք և տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

	Համայնքի ավագանիներ	կողմ	դեմ	ձեռնպահ
1	Գևորգ Բաբայան	Քեֆ		
2	Զեյնա Զարգարյան	Կողմ		
3	Արմեն Լազարյան	Մեծամասնություն		
4				
5				

ՀԱՄԱՅՆՔԻ ՕՐԵՆՔԱՎԵՐ



ՅՈՒ. ՄԿՐՏՅԱՆ